

10864



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան



« 03 » 10 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 201 - 24

Նախաձեռնող՝

«ՄՖ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ

Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Նոր Արտագերս

Գործունեությունը՝ Ֆանտանի բազալտի հանքավայրի արդյունահանում

Արմավիրի մարզ, Չարենցավան համայնք, բն. Ֆանտան

Առդիր՝ 6 թերթ

**Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի արդյունահանման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվության**

Նախաձեռնող՝ «ՄՖ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/,
նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, բն. Ֆանտան

Ներածական մաս. Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրում «ՄՖ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Ֆանտանի բազալտի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզում՝ Ֆանտան գյուղից 1-2կմ հարավ-արևելք, Երևան քաղաքից 37-38կմ հյուսիս-արևելք: Մոտակա բնակավայրերն են Ֆանտան, Սոլակ, Քաղսի գյուղերը, Հրազդան և Չարենցավան քաղաքները: Լեռնագրական տեսակետից՝ Ֆանտանի հանքավայրի տարածքը հարում է Կոտայքի սարավանդին: Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40° 23' 03", արևելյան լայնության 44° 43' 48":

Մ-4 միջպետական նշանակության և Հ-11 հանրապետական նշանակության ավտոճանապարհները գտնվում են հանքավայրի տարածքից համապատասխանաբար՝ 3.8կմ և 3.1կմ հեռավորությունների վրա: Հանքավայրը տեղադրված է ճանապարհային ցանցին մոտ և կապված է ասֆալտապատ ճանապարհի հետ բարեկարգ գրունտային ճանապարհով: Հանքավայրի արևմտյան մասով անցնում է բնահողային ճանապարհ, որը բարեկարգումից հետո օգտագործվելու է որպես հանքին մոտեցնող ավտոճանապարհ: Ֆանտանի բազալտի հանքավայրի տարածքում ստորգետնյա ջրային ռեսուրսները բացակայում են: Հայցվող Ֆանտանի հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հուշարձանների կամ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում:

Ֆանտանի բազալտի հանքավայրի համար Ընկերության կողմից հայցվող տարածքի հողերը գտնվում են Չարենցավան խոշորացված համայնքի Ֆանտան գյուղի վարչական սահմաններում, ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով:

Հայցվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 8.7հա, այն եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (ըստ WGS-84 (ARMREF 02) համակարգի).

- | | |
|-------------------------------|--------------------------------|
| 1. 4471864.6670, 8475366.3577 | 7. 4471874.0000, 8475554.0000 |
| 2. 4471922.3516, 8475341.2911 | 8. 4471870.6935, 8475487.5228 |
| 3. 4471955.0690, 8475358.7668 | 9. 4471940.5111, 8475489.5104 |
| 4. 4472034.8283, 8475292.4146 | 10. 4471937.1063, 8475414.0614 |



5. 4472272.5075, 8475637.5859
6. 4472195.1079, 8475716.1280

11. 4471866.9413, 8475412.0830
1. 4471864.6670, 8475366.3577

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է օգտակար հանածոն հիմնատակող ապարներով (խարամացված բազալտներ) և բազալտներով: Ժամանակակից առաջացումները, որոնց հզորությունը տատանվում է 0.0-2.1մ սահմաններում, ներկայացված են բերվածքաին ապարներով և հողաբուսական շերտով, որի միջին հզորությունը կազմում է 0.26մ: Մակաբացման ապարները, որոնք ներկայացված են հողաբուսական շերտով և բերվածքաին ապարներով՝ հնարավոր է հեռացնել բուլդոզերով:

Հանքավայրի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են: Բոլոր անցկացված փորվածքներում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել, ինչը բացատրվում է ապարների ջրաթափանցելիությամբ՝ որի հետևանքով մակերևույթային ջրերը արագ հեռանում են խորքերը:

ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտների հանքավայրի պաշարները 01.01.1968 թվականի դրությամբ՝ հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 19.02.1968 թվականի N 163 արձանագրությամբ, ընդհանուր՝ A+B+C₁ կարգերով 5602.763 հազ.մ³ քանակով:

Պաշարները հաստատվել են որպես շինարարական քարի հումք՝ բլոկի 31.4% միջին ելքով: Հանքավայրը չի շահագործվել և հաստատված պաշարները 01.01.2024թ. դրությամբ՝ մնացել են անփոփոխ: Բացահանքի տարեկան արտադրողականությունն, ըստ օգտակար հանածոյի արդյունահանման՝ 100000մ³ է, ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- ամենամեծ երկարությունը – 480մ
- ամենամեծ լայնությունը – 300մ
- բացահանքի առավելագույն խորությունը – 47.0մ
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.43մ
- օգտակար հանածոյի միջին հզորությունը – 25.0մ
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները - 2175հազ.մ³
- արդյունահանվող պաշարների քանակը– 1975հազ.մ³
- մակաբացման ապարների քանակը (հողաբուսական ապարներ) – 37675մ³
- հիմնատակող ապարների քանակ – 13697մ³
- բացահանքի օտարման մակերեսը – 8.698հա:

Բացահանքի բացումը կատարվում է հանքավայրի արևելյան մասից անցնող, գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհի 1930.0մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1945.0մ բարձրության նիշ ունեցող հորիզոն մոտեցող ճանապարհի անցումով: Մոտեցող ավտոճանապարհի երկարությունը 200մ է, լայնությունը՝ 10մ, առավելագույն հաղթահարվող թեքությունը՝ 100%:

Հանքավայրից հայցվող տարածքի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխումով: Մշակման համակարգի տարրերն են՝

- հանքաստիճանի բարձրությունը – 5 մ;
- անվտանգության բերմայի լայնությունը – 2.0 մ;
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90°;
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 20-25 մ:

Բլոկների արդյունահանման աշխատանքները ներառում են միաքարի անցատուրը գանգվածից, միաքարի հեռացումը հանքախորշից, վերջինիս մասնատումը բլոկների և կոպտամշակումը, բարձումը տրանսպորտային միջոցներ և թափոնների հեռացումը:



Բլոկները և խճի հումքի իրացումը կատարվում է սպառողի տրանսպորտային միջոցներով:

Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել բուլդոզեր-բարձիչ-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրի օգնությամբ: Լցակույտ առաջացնող ապարները հանքավայրի տարածքում ներկայացված են մակաբացման շերտի հողաբուսական առաջացումներով և հիմնատակող ապարներով, համապատասխանաբար՝ 37675մ³ և 13697մ³:

Մակաբացման և հիմնատակող ապարների մի մասը նախատեսվում է պահեստավորել ներքին լցակույտում: Լցակույտառաջացումը կատարվելու է բուլդոզերային եղանակով: Հիմնատակող ապարները, որոնք առաջանում են 1925մ նիշ ունեցող հորիզոնի շահագործման ժամանակ, տեղադրվում են նույն հորիզոնում, հորիզոնի արևելյան հատվածում, միջինը 0.31մ բարձրությամբ՝ ստեղծելով ներքին լցակույտ: Այնուհետև, արտաքին լցակույտում տեղադրված 37675մ³ հողաբուսական ապարներից 1210մ³ ծավալը տեղափոխվում և տեղադրվում է 1925մ նիշ ունեցող հորիզոնում արդեն փռված հիմնատակող ապարների վրա (ներքին լցակույտ) և հարթեցվում՝ միջինը 0.5մ բարձրությամբ: Նույն հերթականությամբ կատարվում է նաև մյուս հորիզոնների վրա հիմնատակող ապարների փռումը և հողաբուսական ապարների տեղադրումը հիմնատակող ապարների վրա՝ կատարելով հողաբուսական ապարների մակերևույթի հարթեցում: Արտաքին ժամանակավոր լցակույտի մակերեսը կազմում է 6212մ², վերին հարթակի մակերեսը՝ 2567մ², շեպի թեքությունը՝ 33-35°, առավելագույն բարձրությունը՝ 14մ: Ներքին լցակույտի մակերեսը կազմում է 76135մ², միջին բարձրությունը՝ 0.68մ, որից հիմնատակող ապարներ՝ 0.18մ, հողաբուսական ապարներ՝ 0.5մ:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեղադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ջրցան մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն ստորագետնյա ջրերը բացակայում են, հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է տրանսպորտային աշխատանքներով և արտահայտվում է փոշու և ծխագազերի առաջացմամբ: Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ ուղղված մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում.

- փոշենստեցման նպատակով՝ փոշեռաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա գոտիների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով:



- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում, որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է բացահանքի, արտադրական հրապարակի, ճանապարհների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ ընդհանուր 7.702հա տարածքում, որից 7.6 հա կազմում է մշակված տարածքը, իսկ մնացածը՝ արդյունաբերական հրապարակը /0.03հա/ և լցակույտ տանող ավտոճանապարհը /0.072մ²/:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի նպատակով, 2125մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց, մակաբացման ապարները տեղափոխվելու են ներբացահանքային տարածք և իրականացվելու է ներքին լցակույտառաջացում: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա: Այդ նպատակի համար բացահանքի արևելյան հատվածում ձևավորված արտաքին լցակույտից բացահանքի մշակված հանքաստիճանների վրա է տեղափոխվելու 37675մ³ ծավալով պահեստավորված հողաբուսական շերտը, փովելու և հարթեցվելու է T-130B բուլդոզերով: Հարթեցված հողաբուսական շերտն այնուհետև պարարտացվելու է գրանուլացված կենսահումուսով և կատարվելու է տարածաշրջանի տափաստանային լանդշաֆտներին բնորոշ բուսատեսակների ցանքս: Ընդհանուր ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 3810.34 հազ. ՀՀ դրամ, որից լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը կազմում է 2514.74 հազ. ՀՀ դրամ, իսկ կենսաբանական փուլի աշխատանքների նախահաշիվը՝ 1295.6 հազ. ՀՀ դրամ: Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին՝ Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Հանքավայրի շահագործման ավարտից 2 տարի առաջ՝ կներկայացվի հանքի վերջնական փակման ծրագիրը: Բացահանքի, լցակույտերի և արտադրական հրապարակի տարածքից 0.29մ միջին հզորությամբ հողերի բերրի շերտի պահպանման միջոցառումները սահմանված է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Այն կուտակվելու է ժամանակավոր լցակույտի հատուկ հատկացված մասում՝ այլ հիմնատակող ապարներից տարանջատված:

Արտադրական հրապարակի տարածքի աղտոտումը նավթամթերքներով կարող է մեղմացվել ԲԿՊ-ով ամրագրված մեղմացնող միջոցառումների իրականացման միջոցով:

Հանքավայրի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց ինտենսիվությունը ցածր է և աղմուկի մակարդակը չի գերազանցի թույլատրելի նորմը: Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (45դԲԱ): Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով նախատեսվում է մշակել ժամանակացույց, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների կիրառումից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղադրել խլացուցիչներ: Հանքարդյունահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված՝ հնարավոր է առաջանա նաև առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վերացիա), որը կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը



չպետք է գերազանցի 112 դԲԱ:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /ներառյալ՝ աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ծախսերը ներառված են ՇՄԱԳ-ում:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ՝ ուղղված կենսաբազմազանության և հողային ռեսուրսների պահպանությանը: Համաձայն կենսաբազմազանության վերաբերյալ ՇՄԱԳ-ում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության տարածքում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բացակայում են: Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող բնության հուշարձանների տարածքներում, կամ պատմամշակութային սահմաններում:

Պարճառաքանական մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ֆանտան բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ (չորս քննարկում), որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության, և, հիմնականում՝ կարևորվել և քննարկվել են համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերը, ինչպես նաև արդյունահանման աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը: Ընկերությունը նախատեսում է պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարության հետ՝ քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից՝ նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունն օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա՝ կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:



Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել և ապահովել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Ֆանտան բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

2. Քանի որ «Լեռնահովիտ քարային կուտակումներ» բնության հուշարձանը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքին մոտ, անհրաժեշտ է հանքի տարածքի եզրագծով իրականացնել երկշերտ ծառատունկ:

3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել լիազոր մարմին:

4. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, Ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ կազմել հանքի փակման վերջնական ծրագիր և ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

5. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը (կարևորելով՝ փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանի, հումք տեղափոխող մեքենաների բեռնվաճառության և երթերի ապահովումը), դրանց իրականացման ժամանակացույցերը և պայմանները:

6. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄՖ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող

 Հերիքնագ Մկրտչյան